ւում։ Այստեղ՝ դալար ու ծաղկազարդ գորգով ծածկված ընդարձակ դաշտավայրի մէջ, տեղ-տեղ խրոխտ կանգնած հսկայական ուռենիները և բարդիները խորհրդաւոր կերպով օրօրում են իրենց կատարները, խշխշում քամու առաջ, կարծես պատմում են իրար ցաւ ու հոգսերը, գանգատւում իրենց վշտերից և ապա միահամուռ սգում են և հեծում . . . Մութը հետզհետէ սարերն է ծածկում։ Ահա մի խումբ ջահել հարսներ և աղջիկներ, կժերը դրած ուսերին շտապով աղբիւրն են իջնում տան համար ջուր բերելու։ Գիւղի հովիւները ոչխարները, կովերն առաջներին գձած՝ յետ են գալիս դաշտերից։ Արևն արդէն մայր մտաւ և ես դեռ քայլում եմ կանաչների և խոտերի միջից։ Տեսարան—տեսարանի ետևից նկարւում է իմ աչքի առաջ։ Աստուած իմ, որպիսի՜ հրապուրիչ և գիւթական տեսարաններ, որքան պօէզիա, որքան հրաշալի գեղապատկերներ։ Ամեն ինչ վսեմ է և խորհրդաւոր, ամեն ինչ անօրինակ է և կախարդիչ։ Այդ բոլորը մի հրապուրիչ ամբողջութիւն են կազմում և առանձին հմայք տալիս այս գաւառին։ Քայլում եմ անվերջ բնութեան այդ գեղանկարի միջից։ Ա՜խ, բնութի՜ւնը, և այն էլ այսպիսի

բնութիւնը . . . մարդկային կարողութիւնից վեր է նկարագրել այդ. ոչ բառերով կարելի է գրել և ոչ էլ պատկերացնել. Այվազովսկու վրձինը միայն կարող է նկարել այդ գեղեցիկ տեսարանը։ Ամեն օր վայելում եմ այդ բնութիւնը և էլի չեմ կշտանում։ Դա ինձ համար գերագոյն մի հաճոյք է, մի ամբողջ կեանք, կեանքերի գերագոյնը։ Գիտեմ, սիրելի Վարդուհի, այս տողերիս վրայ չարաճճի ժպիտը վերստին խաղում է դէմքիդ վրայ, բայց խնդրում եմ, ինձ մի՛ մեղադրիր, որովհետև այդ խորը անբացատրելի զգացումը բնութիւնն ինքն է դրել իմ սրտի մէջ և ես կսիրեմ նրան, որքան կեանք ունեմ։

Ներիր սիրելիս, որ այս անգամ շատախօսեցի։ Այժմ ընդհատում եմ նամակս. միւս անգամ կգրեմ Քեզ այս գաւառի հայ ազգաբնակութեան մասին, թէ նրանք ո՞րտեղից